63. ԷՐԿՈՒ ԼԱԶԳՅԻ

Ասում ա՝ էրկու հըրևան լազգյի յրն ինում։ Էս էրկու լազգյի-րը սիրում ըն մին ըխճըկա։ Էն վըրա ախճիղյր սիրում ա էս էրկու լազգյուն անա մինին, սրա յըրան էլ փախկվում։ Մին քանի վախտա-նը հետը էս փախկված լազգյին ուրան հըրրվանին ասում ա. «Ե՛կ, մինտեղ քյընանք Ղարաբաղ, կյեկչութըյուն անինքյ»։

Խոսքը մին ըն անում, կյամ Ղարաբաղ։ Տեղ հըսնելանը հետը փախկվածը ըղափին ասում ա. «Ախպե՛ր ջան, օղում ըս էս շենու-մը կաց, ես քյինամ էն մին շենը, օղում ըս ես ըստեղ կենամ, դու քյինա էն մին շենը։ Ճոկ-ճոկ ինինքյ, վըրեր փող ըշխադելը հեշտ ինի, համ էլ պայման անինքյ, վըրեր մին տարուց հետը մինտեղ քյըր-նանք տուն, ճոկ-ճոկ չի քյինանք»։ Ասում ա. «Հավ»։

Խոսք ըն տամ ուրուր, մինը մնամ ա էս շենումը, էն մինը քյինամ ա մին օրիշ շեն։ Մին տըրնանք հետ փախկված հընդերը չորս հարուր մանեթ փող ա աշխատում, հը ա կենում քյինում հընդերին կոշտը, թա. «Ե՛ր քյինանք, մին տարին թըմամալ ա»։ Աղափի հընդերն ասում ա. «Պա ես հունց կյա՞մ, վըրեր փող չըմ ըշ-խատալ»։ Փախկվածն ասում ա. «Ա՛խպեր, մեր խոսքը խոսք ա, եկ քյինանք տուն. ես չորս հարուր մանեթ փող ըմ ըշխատալ, էր-կու հարուր մանեթը քյեզ, էրկու հարուր մանեթը ինձ»։

Աղափը համաձայնվում ա և էրկուսավ հըդե յըրն ընդնում դի-պա Դաղըստան։ Տոն չհըսած, Դաղըստանա մին մոտև տեղ, վեր ըն կյամ, թա ցինչանան, պատտառ հաց ուտելանք հետը, փըսակված

Հընգերը հանում ա էրկու հարուր մանեթը տամ հընգերին, ասում. «Առ, էս էրկու հա̈րո̈ւր մանեթը քյեզ քու մոր կաթնեն նրման բյեզ հալալ, վըեչ մին վախտ, մունք բարիկամ ինինքյ, յա դուշման, կովում ինինքյ, յա հա̈շտ, ես իմ օրումը, խոսք ըմ տամ, էդ էրկու հա̈րո̈ւր մանեթեն անումը ասմլեչ»։ Ասում տ, էրկու հա̈րուր մանեթը տամ հրնդսրը, ինքյը թեքյ ընդնում, քուն ինում։

Էս աղափ հընգերը ինքյը իրան մետք ա անում, թա. «Էս մարթը հա̈լրա̈թ փող շատ օնե, վըեր էրկու հարո̈ւր մանեթը ինձ ա տամ»։ Տուս ա օնում խանչալը, կոխում հընգերին փորը։ Հընգերը խանչալեն ցավան նհետ դուրթնանում ա, ըղաչանք, պըղատանք անում, թա. «Ճատ ըմ խնթըում, ինձ ըսպանել մեր, էգ էրկու հա̈րո̈ւր մանեթեն դիման էլ իվել փող չօնիմ»։

Ամմա էս աղափ հընգերը եշում չի հընգերեն ասածներեն, թա. «Ա՛խպեր, ըսպանել մեր, մին ա, քամեն ինի, յա տիրեը, խաբարը պետմա տանի Դաղստան, վըեր տու վըս ինձ ըսպանալ, վըեր ինձ ըսպանողը տու վըս»։ Աղա̈փ հընգերը ըսպանելյան եար, հընգերեն ջուբերը, ծուցերը ման ա կյա̈մ, ամմա էրկու հա̈րո̈ւր մանեթից ավել փող չի քըթենում։ Փուշմա̈նում ա, ամմա էլ պենը պենան անց ա կացալ։ Հընգերեն մեյիդը քաշ ա տամ, քըցում հղեցին ներքե թա̈րա̈փը, խանչալով մի կուճի փոս քա̈նդում, մաչը քըցում։

Աղա̈փը վըեր տոն ա կյա̈մ, փըսակվածեն կնեգյը կյա̈մ ա հըրցընում, թա. «Պա իմ մարթըս հոր ա՞»։ Աղա̈փն ասում ա, թա. «Քու մարթըդ իմ կյալան հենգյ օր առաչ հիվանդացալ ա, հենգյ օր էլ ես տրա հետե յըտացե, քյեցե, թա տըեսնամ հունց ա, տրեսե. վըեր չուրրը իմ քյինալը հայերը թաղալ ըն»։

Մին տարանը եար, հիրը վըեր էս ըսպանելը լոխճա միննան ընկած ա ինում, էս ա̈ղա̈փը մարթ ա ըղարկում էս կնդա կոշտր, թա. «Մին ա, սրանա եար քու մարթըդ էլ ետ չի կյա̈լու, եկ ինձ»։ Էս կնեգյը մետք ա անում, մետք, վերչը փսակվում ա։ Թա̈զա̈ փըսակվածնեն ապրում ըն սերավ, վերչն էլ մին սըրուն տղա յա ինում։

Մին օր մարթ ու կնեգյ վճիռ ըն անում հըրեան շենան տասսը փութ ցորեն առնին։ Լըծում ըն ըրրան, եր օնում ուրա̈նց խոխան և հղե ընկնում դիպա հըրեան շենը՝ ցորենը պիրելու։ Էդ շենին հղեն անց ա կենում համեն ընտեղավ, հինչտեղ աղափ հրնգերը ըսպանալ ա փսակված հընգերեն։ Վըեր կյա̈մ ըն հըսնում ըստեղ, ըրրան կըղնըցնում ըն, եզները պեց թողնում, վըեր ըրածին, ուրա̈նք էլ պատառ դինջա̈նան։ Էտ վախտը մին քամի յա պըցըանում, էս քամին թողն ու տիրեը ուրուր խառնած տես ու տեն ա քշում, յա երկինքը պըցըրցնում։ Էս վըեր տեսնում ա մարթը, բիրդան մետն

ա ընկնում հընգերին ասածը, թա մին ա, քամին ինի, յա՝ տիրևը, խարարը տեղ կհըսցնին, ծիծաղում ա։ Կնեգյն ալբահալ հըրցնում ա, թա. «Ա՛ մարթ, խե՞ ծըծըղեցեր»։

Սուվթա մարթը սարավ-քոլավ ա քըցում խոսքը, ամմա վըեր տըևսնում ա կնեղյը ծեռք չի քաշում, մետք ա անում, թա. «Անը կացած, քյնցած սլեն ա, թող ասիմ»։ Եվ մին-մին ըսկսում ա նաղլ անել, թա հունց ինքյն օղում չար կյար, հունց հընգերը էրկու հարուր մանեթ փող տվավ, հունց եկին ըստեղ հըսին, հունց ինքը ըսպանից։

— Լավ ըս ըրալ,— ասում ա կնեգյը։

Տեղ ըն հասնում, քըշերը թեքյ ընգնում, քոն ինում։ Կես քըշերին, վըեր մարթը քոն իլած ա ինում, կնեգյը եր ա կենում, խանչալը տուս օնում, մարթու սերտը խրում, մարթին ըսպանելանը ետը, նտ ա տեռնում խուխեն ըսպանում։

Սուղին վախտը, ղատավերը հըրցնում ա. «Լա՛վ, ասինքյ, թա մարթիդ սպընեցիր, վըեր էն ուրան հընդերեն ա ըսպանալ, պա խուխետ խե՞ ըսպընեցեր»։

— Ընդրա հետե, վըեր շանան էլ շոն բհամ կըկյա։